ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆԻ

(Նարուներակութիւն [1])

«Բազմութիւն իմաստնոց փրկութիւն է աշխարհաց։» (Առակ)

«Կրթեցէք զանձինս ըստ ժամանակիս նահատակութեանն։» (Ոսկեբերան)

«Այլ մարդոյ, թէ և իցէ ոք իմաստուն, չէ ամենեւին բազում ինչ ուսանել...։» (Սոփոկլէս)

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ ՄԻՆՉԵՒ ՊԵՍՏԱԼՈՅՑԻ

Այս բարեկարգութիւնը միայն Սաքս-Գոթալումն էր. Գերմանիայի միւս մասերը բաժին չ'ունէին այս գործում. չը կար ազգային միութիւն և ինքնաճանաչութիւն։ Ոչ մի գործ չէր կարող ընդհանրանալ, մինչև որ համեբաշխութիւն և բարի նախանձ չը լինէր, որոնք չէին կարող լինել, մինչև որ ազգը մի որ և է միութեան կէտի կամ գաղափարի խելամուտ չը լինէր։ Ահա մինչև այդ միութիւնը և ազգային ինքնաճանաչութիւնը Գերմանիայի խառն ժամանակներից մէկն է։

Այդ խառն շրջանում միայն զանազան հանճարների—պետական կարող անձերի երևալը լուսոյ աղբիւր էր գերմանացիների համար, որ ծագելով երկրի այս և այն մասում սակաւ ազդեցութիւն չէր թողնում միւսների

---

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի № 4.

... ուրուք.

վերայ։ Այդպիսիներից առաջինը համարելի է Բրանդենբուրգի ընտրիչխանը (կուրֆիւրստ)՝ Ֆրիդրիխ Վիլհելմ, որ հասկանալով իւր ժամանակաւայ կարիքն և գիտակցաբար նկատելով 30-ամեայ պատերազմի առթած թշուառութիւններն, որոնք ձգել էին երկիրը լետին անբաղդութեան մէջ, ձեռք մեկնեց իւր երկիրը գերեզմանական եղկելի վիճակից բարձրացնելու արժանաւոր աստիճանի, կեանքի ցնցում տալու և շունչ փչելու. իսկ ապա նորա որդի Ֆրիդրիխ III-ը լետ չը մնաց իւր հօրից, շարունակեց սկսած գործը և ձեռնհաս եղաւ իւր դքսութիւնը թագաւորութեան բարձրացնելու։ Սորա օրով Բրանդենբուրգ—Պրուսական պետութիւնը հետզհետէ ընդարձակուեց և դպրոցական կեանքը լուրջ ուշադրութեան առարկայ դարձաւ։ Որդին Ֆրիդրիխ I թագաւորը նախանձախնդիր լինելով գիտութեան, հիմնեց Բերլինում գիտութեանց ճեմարանը և Ֆրանկֆուրտի ու Հալլէի համալսարանները։ Հալլէի համալսարանը բարձրացաւ մանաւանդ Ա. Ն. Ֆրանկէ՚ի այնտեղ հաստատուելով, որ Լայպցիգում ևս դասախօսեց կրթութեան զարկ տալ աշխատելով, ըստ որում ինչպէս և Դրեզդէնում ամենօրեայ լսարան էր բացել ժողովրդի համար, որտեղ Ս. Գրքից կարդալով լուսաբանում էր, ասելով՝ «մէկ նաքարակիտ կենդանի հաւատը պատուականագոյն է քան մէկ ցենտներ. լոկ պատմական գիտութիւն, և մէկ կաթիլ իսկական սէրն առաւել է, քան գիտութեան և գաղտնիքների ամբողջ մի ծով»։ Նա մեծամեծ գրքաձքներ չէ թողել բանահիմն ունենալով թէ՝ «լոկ գրքեր գրելով կրթութիւն չի բարձրանալ»։ Եւ իրաւ, նա իւր գործերով առատ նիւթ է տալիս իւրաքանչիւր կենսագրի և խրատական է անձնիւր գործատենչի։ Նա շատ տեղեր ժողովրդի մէջ զանազան անձերի թիւրիմացութեան և նախանձի հալածանք կրեց, բայց երբէք դադար չը տուեց իւր հանրօգուտ գործերին։ Նա մի ողորմական արկղիկ կախեց իւր բնակարանի մօտ աղքատների համար և մի անգամ 7 գուլդեն գտնելով մէջը, իսկոյն 2 գուլդենի գրքեր գնեց և մէկ չքաւոր ուսանող վարձեց, որ պարտաւոր էր ամենայն օր 2 ժամ աղքատ աշակերտների հետ պարապել։ Եւ թող զարմանայ ընթերցողը, որ այդ ուսումնարանը հիմք եղաւ նորա մեծանուն հաստատութիւններին։ Նա ստացաւ 500 տալեր նէէր, որով իսկոյն հաստատեց ձրի-ճաշ չքաւոր ուսանողների համար, որոնք պարտաւոր էին նորա ուսումնարաններում օգնական ուսուցիչներ լինելու։ Դրքա կազմեցին մի տեսակ ուսուցչանոց (Seminarium Praeceptorum), որ մեծամեծ օգուտներ տուեց, ժողովրդական ուսումնարաններին մատակարարելով ոչ թէ պատահական հացախնդիր անձեր ուսուցչական ծանր պարտաւորութեան ներքոյ, այլ վարժուած, գիտակից, գործատենչ և բարեխիղճ վարժապետներ։ Չքաւորների ուսումնարանը այնպէս ծաղկեց, որ քաղաքացիներն ևս դիմեցին նորան խնդրելով՝ իրանց համար ևս ուսումնարան հիմնելու, ըստ որում և հիմնեց նա քաղաքացիական դպրոցների սկիզբը տալով (Bürgerschule)։ Նա նկատելով որ ապարդիւն է անցնում ուսումը առանց կըր-

թուրեան, վասն զի որբ—չքաւոր աշակերտներ դպրոցից դուրս անօգնական մնալով՝ մտահան էին անում սովորածը, հիմնեց մի նուիրատուութեամբ առաջին որբանոցը 1695 թ. այնպէս որ 1698-ին միշտ բոլոր ուսումնարաններում ունէր 409 աշակերտներ, իսկ մեռնելու տարին 2.200 աշակերտներ, մօտ 200 վարժապետներով։ Մինչև իւր 64 տարեկան հասակն այնքան մեծ լառաջադիմութիւն.՝.՝.՝ Շատ կենսագիրներ ասում են, որ Նորա նմանը ոչ առաջ, ոչ էլ յետոյ եղած է—այդպիսի մի անխոնջ անձնազոհ մանկավարժ։

Կարճ կապելու համար միայն միշտ, որ նա այդքան շատ ուսուցիչներ տուեց ուսուցչական ժողովներ կազմելով, փորձադասեր տալ տալով թէ հրապարակապէս և թէ առանձին, այնպէս որ Նորա վարժապետացուները ուսուցանելով՝ ուսուցանել էին ուսանում և միայն 1707-ին համալսարանին կից բացին բարձր ուսուցչանոց։

Ուսումն և լուսաւորութիւնը ստացել էին արդէն իրանց խթանը, մնում էր այժմ լառաջատարութիւնը, որ յաջող էր պարագաների նպաստաւոր բերմամբ։ Ասպարիզից հեռացող աշխատաւորներին յաջորդեցին նոր ձեռքեր նոր աշխուժով։ Ուսումնասէր պետի ջանքով երևեցին ժողովրդական ուսումնարաններ խաւարի ճանկերից շորթելու այն հպատակներն, որոնք յանձնել էին իրան Աստուածանից արժանաւոր դրութեան մէջ պահելու։ Ի՞նչ չէ կարող անել գեղեցիկ և աստուածալին գաղափարներով ոգևորուածը. միայն Պրուսիայում 1000-ի չափ ուսումնարաններ կենդանութիւն ստացան, որոնց համար թէ կանոնադրութիւններ և թէ պարտադիր ուսումն հետևեցին իրար։ Իւրաքանչիւրի լուսաւորութիւնն սկզբունք էր ուսման լառաջադիմութեան և կեանքի բարելաւման, որ և նա հոգսի գլխաւոր կէտը շինեց, որովհետև ինչպէս նա ասում էր՝ «հանրութեան բարեկեցութեան մնասում են տգէտ, նախապաշարած, կոպիտ և անբարոյական մարդիկ»։ Այդ գաղափարի անկիւնաքարը գոյգոյէ ուսուցչ էր, որ դեռ շատ առաջ Աթէնքում և Սպարտայում գործադրուած էր, սակայն ոչ ընդհանուր մտակերպութեան սկզբունքով—որպիսին միայն Պրուսիային է պատկանում։ Օրինակը կար, որի փայլը գրաւեց հարևանների ուշադրութիւնը, ըստ որում լուսաւորութեան ճշմարիտ նախանձախնդիրները սկսեցին արագութեամբ նմանադործել։

Ֆրիդրիխ Մեծը զարկ տուեց գիտութեան, ինքն ևս գործակից եղաւ «իմաստասիրութեան և բանահիւսութեան գիտարանին» անդամակցելով, սակայն գիւղերում և մանր քաղաքներում նոյն լառաջադիմութիւնը չէր երևում. այնտեղ դեռ տիրում էր կեղծութեան մառախուղը, մինչդեռ թագաւորի ձեռքը մինչև այդ խոր անկիւնները կարկառելու շարժառիթներ չը կային, թէև տեղ-տեղ գործունեայ անձերի հանդիպելով լառաջ էր գնում և ուսման գործը։ Սակայն Ֆրիդրիխի գլխաւոր արժանիքն այն է, որ նա կարևորը կարգի բերաւ և կանոնադրութեան ենթարկեց, պարզ սկզբունք-

ների վերայ հիմնելով։ Ընդ նմին նա աշխատում էր ուսման պատիւը բարձրացնել ժողովրդի աչքում, ուստի և հրամայում էր արժանաւոր ուսեալներին ուսուցչութեան հրաւիրել. նա խորհրդադրեց դասախօսներին վերամացնելու ուսումնավարքերի չարգն և փառքը գեղեցիկ, հասկանալի և դիւրընթերցանելի գրութիւններով։ Բարձրագոյն դպրոցները պէտք է այն չառաջ տանէին, ինչ որ կեանքի մէջ գործունէութեան և ազգային ձգտումներին օգտակար և նպաստաւոր էր։ Աշակերտներն էլ պիտի վարժուէին անկախարար մտածելու, որ մի պարզ ապացոյց է թէ որքան աշխատում էր նա իւր ժողովրդի ինքնախոհութիւնն և գիտակցական մտածողութիւնը զրգռելու և նորան իւր մտքի տէրը դարձնելու։ «Ուսեալ և հասկացող ժողովուրդը միշտ աւելի բարոյական և ջանասէր է, քան տգէտ և խաւարը». ահա Ադամ Սմիթի խօսքերը, որոնց գիտակից էր Ֆրիդրիխ և ճգնում էր ըստ կարելոյն իրականացնել այդ սկզբունքը. նա մինչև իսկ վարժապետներին հրահանգներ էր տալիս, ինչպէս օրինակ ասելով՝ «Վարժապետը պէտք է աշակերտների առաջ կարդայ և պատեհ աւիթներ աչքաթող չ'անէ պատանիների քննադատելու ուժը սրելու և ճշմարտին, բարւոյն ու գեղեցկին ճաշակը զարգացնելու։ Վերջապէս «ես լոգնել եմ ստրուկներ կառավարելուց», հռչակաւոր և իւր հանճարին գործունէութեան այս մըշտայարդ բանահիմն ասելով, կնքեց իւր մահկանացուն։

Այն այս շրջանումն էր, որ Ֆրանսիայի մէջ գլուխ բարձրացրեց Ժան-Ժակակ Ռուսսօ իւր «Էմիլ» գրուածքով, որում նա հետևում էր նոյն ուղղութեան, ինչպէս Կոմենիոս, ասելով՝ «իմ բանակարգութիւնն (սիստէմ) է բնութեան չառաջադրութիւնը», սակայն այն տարբերութեամբ, որ վերջինս «բնութիւն» չիրարկում է հակադիր մշակութեան (կուլտուր)։ Նա կարծում էր թէ մշակութիւնից զուրկ ժողովրդները դրախտային կեանք են վարում, ըստ որում և Վոլտերը գրեց նորան «Էմիլը» կարդալուց յետոյ. «երբ մարդ կարդում է Ձեր գիրքը, մի հաճոյք է զգում չորս ոտքերով շրջելու...»։ Մարդկայնութիւնը՝ քրիստոնէական արդիւնքն, իսկ Ռուսսօի բնամարդը բնաւ գերակայական մարդ չէ։ Ակսու ամենայնիւ, այն գաղափարի պատճառով Ռուսսօի վարկը չէ ընկնում։ Նա ենթակայ է եղել շատ տատամսութիւնների, բայց ի վերջոյ կատարեալ համոզմունքով գրում էր. «Այս խոստովանում եմ որ Ս. Գրքի վեհութիւնը զարմացնում է ինձ։ Աւետարանի սրբութիւնը խօսեցնում է իմ սիրտս։ Տեսէք իմաստասէրների հպարտունակ գրքերը, քանի փոքր են դրա նորա առաջ։ Մթթէ կարելի է՝ որ այդպիսի մի վեհավսեմ ընդ նմին և պարզ գիրք մարդու գործ լինի։ Ի՞նչ հեզութիւն, ինչ սրբութիւն նորա բարոյքների մէջ։ Ի՞նչ խոր իմաստութիւն նորա խօսքերի մէջ.... Սոկրատը օրհնում է այն մարդուն, որ լալով տալիս է նորան թունաբաժակը. Յիսուս աղօթում է իւր կատաղի ատող դահճի համար սարսափելի չարչարանքների մէջ։ Եթէ Սոկրատի մահը և կեանքը մի իմաստունի կեանք է և մահ, Քրիստոսի կեանքն ու

մահը մի Աստուծոյ կեանք է և մահ։ Ցիրաւի, Բուսաօի դրութիւնը Գեոթէի ասածին պէս՝ «մարդկային բնութեան աւետարանն է»։ Բուսաօն աւետարանի սուրբ գաղափարներով եղաւ լեղափոխութեան լուսաջավարը, ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն գոչելով, որոնք, դեռ շատ դարեր կ'անցնին, բայց կը մնան ազգերի կենդանարար զօրութիւն։

Այս դարաշրջանը հանճարի դարաշրջանն է. Բերլինի, Կեօնիկսբերգի և Հայլէի համալսարանները ծաղկեցին իմաստասիրութեան և մանկավարժութեան ասպարիզում վաստակող անձերից, որպիսիք էին՝ Կանտ, Ֆիխտէ, Շոպենհաուէր, Հեգել, Հերբարտ, Բինիկէ և այլք, որոնք մի մի աստղեր են գերմանական հորիզոնի վերայ։ Բարոյական կրթութիւն—ահա Կանտի մտակէտը, ըստ որում մարդս միակ կրթելու արարածն լինելով, պարտական է ինքն իսկ իւր մշակութեան աշխատելու, միւսներին ևս կատարելագործելու։ Կրթութիւնը պէտք է մարդուն քաղաքակրթէ, բարոյականացնէ և մշակէ։ Կրթութեան են վերաբերում՝ խնամածութիւն, զրոյց, կարգապահութիւն, խրատ և հոգատարութիւն լուսաւորութեան կամ մտակերպութեան հետ։ Ուսուցիչը պարտաւոր է իւր աշակերտներից նախ հասկացող, ապա մտացի և ի վերջոյ ուսեալ մարդիկ պատրաստել։ Աշակերտը պէտք է գաղանութիւնից մարդկայնանալ, ոչ թէ մտածմունքներ սովորէ, այլ մտածել. աշակերտին պէտք է ոչ թէ տանել, այլ առաջնորդել, որ ապագայում իրանք գնալ գիտենան։ Պէտք է լիշողութիւնը բանալ, ըստ այնմ թէ tantum scimus, quantum in memoria tenemus. Սակայն ամենին պէտք է կրօնը լուսաջէ, երկիւղածութիւն ներշնչելով պէտք է աստուածպաշտութիւն զարգացնել նոցա մէջ, որպէս զի Աստուծոյ կամքով շարժին։ Աշակերտը պէտք է ձեռք բերէ առաքինութիւններ, բարոյական ունակութիւններ, ըստ որում առաքինութիւնները ձեռք են բերւում և ոչ թէ բնածին են։ Ահա այդ հռչակաւոր իմաստասէրի գաղափարներն, որոնք մանկավարժութեան մէջ տեղ բռնելու իրաւունքն ունին։

Ֆիխտէն ևս «ես»-ի և «ոչ ես»-ի յարաբերութիւնները որոշելուց յետոյ յարում է, որ աշակերտը ոչ թէ անկամք մեքենայ պիտի նկատուի, այլ մի ազատ էութիւն։ Նա չի ժխտում, որ, կրթելիս, ստիպելը անհրաժեշտ է, սակայն պէտք է ազատութեան մաս ևս տրուի, այն է հնազանդութիւնն, որ ոչ թէ հրամանի կամ արգելմունքից յառաջ գայ, այլ այն հաւատքից, որ պէտք է լինի աշակերտի մէջ առ ծնողների բարիքն և իմաստութիւնը։ Նախ կրթութիւն, ապա կոչումն։ Ժողովրդի ուսման և լուսաւորութեան հոգատարներն են նախ ուսեալները, ապա ժողովրդի բարոյակրթիչները, որոնք են եկեղեցու ճշմարիտ սպասաւորները, որոնց պարտաւոր է կամակից լինել իրտքանչիւր համայնք։ Ուսեալների կամ ժողովրդի ուսուցիչների և ժողովրդի բարոյակրթիչների մէջ տեղը բռնում են գեղարուեստագէտները, որոնք զարգացնելով գեղարուեստական իմացքը, ծառայում են մարդկանց հասկացողութեան և կամքի զարգացման, որովհետև վերջին-

ներս չարակից են առաջնին։ Այս հիմքերը տալուց յետոյ նա իւր ուշքը դարձնում է գերմանական ազգի վերայ, որ ազգութեան գոյն չունէր բնաւ, վայրենութեան և պառակտման մէջ խորասուզած լինելով։ Նա ձգտում էր միջոց ցոյց տալ իւր ճնշած ազգի եսասիրութիւնը կամ ինքնամոլութիւնը զարթեցնելու։ Նա ասում էր թէ՝ «ոչ մի մարդ և ոչ որ և է պատահար չէ կարող մեզ օգնել, այլ մենք պարտ ենք մեզ օգնել, եթէ օգնելու հարկ լինի»։ «մենք կարիքից ստիպւած ենք սրտանց և հիմնաւորապէս բարի մարդիկ կերպագործելու (կրթելու), որոնցով միայն ազգը չարատեալ կարող է, մինչդեռ վատերի միջոցով օտարին հետ կ'ընդխառնուի»։ «Փրկարար միջոցն է՝ կերպագործութիւն տակաւին նոր, ընդհանուր և ազգային ինքնութիւնից՝ ազգի կրթութեան, ազգին, որի ցաւժմեան կեանքը հանգչած է՝ մի նոր կեանք տալով, մի խօսքով՝ ամբողջովին փոխել ցաւժմեան կրթութեան էութիւնը, և այդ է այն միջոցը որ ես առաջարկում եմ գերմանական ազգի դոյութիւնը պահելու համար»։ Ժողովրդի որդիները պիտի ընկերաբար ապրել սովրելով, ապագայ ազգային և բարոյական կեանքի նախազգացումն ունենան, տղայք և աղջկերք ի միասին, առանց սեռի տարբերութիւնը հասկանալու։ Ամենայն լուսաւորութիւն պէտք է ձգտի մի հաստատ և չարատև էութիւն յառաջ բերել, որ ոչ թէ պիտի լինի, այլ և այլապէս չը կարողանայ լինել։ Աշակերտը պէտք է այնպէս կրթուի, որ կամենալ ինչ որ կամենում է և ոչ այլապէս կամենալ կարողանայ։ Ասել է թէ նոր կրթութիւնը պէտք է ամրապինդ կամք գոյացնէ մարդու մէջ։ Այս ինքնամոլութեան փոխարէն պէտք է սէրը տրուի, որ անմիջաբար առ բարին է գնում պարզապէս, ըստ որում նորա կամքը կազմուի այնպէս, որ նորա բարի հաճոյքը ճշդապէս ուղղուի առ բարին։ Նորա կարողութիւնից յառաջ եկած պատկերները պիտի իրականութեան նախապատկերն լինին, սակայն նոյնից անկախաբար, ըստ այսմ ոչինչ ընդունելութիւն արտաքուստ, այլ մեզ յայտնի սեպհական ներքին կէտը գրգիռ ստանալով, ինքնագործունէութեամբ յառաջագայի։ Ուրեմն կրթութիւնը պէտք է անմիջնորդաբար ուղղուի հոգու չափաւորապէս յառաջխաղաց գործունէութիւնը գրգռելու։ Այդպիսով աշակերտը հոգեպէս գործունեալ է լինում լոկ գործունէութեան սիրուց։ Դորա համար նա պէտք է անընդհատաբար կրթուի առանց համայնքների ազդեցութեան ենթարկուելու, միայն իրանց բարոյական կարգաւորութեան սիրոյ յառաջադիմութիւնը նկատել և գնահատել կարողանալու համար՝ պէտք է իրանց մէջ համայնաբար ապրեն, ինքեանց համար մի համայնք կազմելով և անձնականը ընդհանուրին զոհելու վարժուելով։ Մարմնաւոր աշխատանք ևս պիտի ունենայ այդ փոքրիկ համայնքը, որի անդամները իրար օգնել ջանան, միւս կողմից ևս կրօնապէս պէտք է լուսաւորուին և իմանան որ աստ ոչինչ ճշմարիտ չէ, բայց եթէ հոգևոր կեանքը մտածողութեան մէջ, որ ըստ աստուածային օրինագրութեան մէկ է, չը նայելով իւր բազմաստեղ կազմութիւններին։

Ամփոփենք. կրթութիւնը պէտք է թափանցի մինչև կեանքի արմատները, գործէ միակերպ բոլոր խաւերում և պէտք է ազգային և ժողովրդական լինի։ Կրթութիւնը պէտք է ամուր կամք առ բարին գոյացնէ, պէտք է իւր խնդիրը դնէ՝ բարի հաճոյք առ բարին, որ է մարդկային կեանքի արմատը թէ աստ և թէ անդ։ Կրթութեանն ենթակայք են՝ կամք և միտք, սակայն երկրորդն առաջինից առկախեալ։ Կամքի կերպաւորութեան միջոցն է իմացողութեան հոգաը, ըստ որում այդպիսով բարոյական կեանքը կ'ունենայ իւր մշտական ճրագը։ Այս ամենի կնիքն է՝ աշակերտի սեպհական գործունէութիւնը գրգռել։

Սակայն այս ազգահոդ և հանճարեղ մեծ իմաստասէրը հիանում է իւր ժամանակակից դպրոցասէր անձի վերայ—այդ Պեստալոցցին է։

Բ.

Ոչ ոք այնպէս խոր չէր թափանցել մանկավարժական գործը, ինչպէս Պեստալոցցին, որի գրութիւնների վերայ հիանում էր և կրկին ու կրկին կարդում վերուիշեալ իմաստասէրը։ «Ոչ ոք է, ասում է Ռոթէ, ուսուցման գործում արուեստակութեան տանջանքն և դորա առընչութիւնն ընդհանուր չարիքի հետ, որից տանջւում էր Եւրոպան, այնպէս խորունկ չէ զգացել, որպէս Հէյնրիխ Պեստալոցցի, իսկ այն ոգեորութիւնն, որ ի վեր հանեց նորա երևումը Գերմանիայում և դուրսը, վկայեց որ նոյն զգայութիւնը բռնել է անթիւ բարեխոհներ, որոնք այժմ նորա խօսքերից միանգամից հասկացան այն ամենն, ինչ որ նոցանից և ամենից պակասում էր»։ Դեռ Պեստալոցցուց առաջ երևաց Ֆրանկէ, որ պահանջում էր ժողովրդական դպրոցների իրագործութիւնը, ըստ որում նա նախագուշակ հանդիսացաւ Պեստալոցցուն. սակայն նա գործի մանկավարժ էր, իսկ սա ոճաբանութեան մանկավարժ էր, մանկավարժների մանկավարժ...

Պեստալոցցին ծնւեց Ցիւրիխում (1746—1827). «լաւագոյն մօր» խնամածութեան ներքոյ կրթւած, հարուստ ազնիւ զգացմունքով և քրիստոնէական սիրով, հաւատարմութեան, ինքնազոհութեան և երախտագիտութեան գեղեցիկ առաքինութիւններով օժտւած այդ մեծ մարդը, սնանելով մայրական տանիքի տակ պէտք է աշխարհի կրթութիւնը լեղաշրջման ենթարկէր և նորան նոր կեանք, նոր ուղղութիւն տար։ Նա դեռ ասպարէզ չէր ելած, երբ գերմանական դպրոցներն, ինչպէս տեսանք, էրնէստ երկիւղածի աշխատութեամբ և մարդասէրների ջանքով փոքր ի շատէ բարւոքւած էին։ Այդ մարդասէրների մէջ ամենանշանաւորն էր Բազեդով (1723—1790), որ հիմնեց Դեսսաու՝ այսպէս կոչւած՝ մարդասիրարան (Philantropinum), և շատ հետևողներ ունեցաւ, որպիսիք են Վ.օլկէ, Զալցման և այլք։ Նա կրթութեան գլխաւոր նպատակն էր դնում որ «նախապատրաստեն որդոց մի հանրօգուտ, հայրենասիրական և երջանիկ կեանքի», սակայն, թէև մե-

ծամեծ օգնութիւններ գտաւ, չը կարողացաւ ժողովրդի մէջ մնծ յաջողութիւն ունենալ, որովհետև զառանցանքների ենթարկելով ժամանակակից ուսեալների ծաղրին արժանացաւ։ Պեստալոցցին սկզբում գիւղատնտեսութեան նուիրուեց հիւանդութեան պատճառով, բայց մի պարտք զգալով հասարակութեան բարոյքման նպաստելու, ըստ որում ասում էր՝ «ես ուզում եմ իմ կալուածքս միջնակէտ չինել իմ գիւղատնտեսական և մանկավարժական ձգտումներին»։ Նա օգնութեան գիմեց և ժողովելով աղքատ մանուկներ՝ սկսաւ այդ ազնիւ մարդը ապրել «ինչպէս ապրում է մի մուրացկան, մուրացկաններին մարդու պէս ապրել ուսուցանելու համար»։ Սակայն նա ընկաւ վերջին չքաւորութեան մէջ և ծաղր ու ծանակ դարձաւ ժողովրդի աչքում. նա անվհատ էր և ահա 1798-ին Ստանցից վերստին սկսելով և օրն ի բուն իւր աշակերտների հետ ապրելով, խաղալով, քնելով և զարթնելով աքանչելիք գործեց դպրոցական գործում, որ նկարագրելը շատ հեռու կը տանէր մեզ և մեր գրութեան շրջանից դուրս կը գալինք։

Այդ չքաւորութեան ժամանակ իսկ գրած «Ճգնաւորի իրիգնաժամերը» գիրքը պարունակում է բազմաթիւ մանկավարժական զաղափարներ, որոնք դպրոցական լուսաջադիմութեան մտախթաններ էին։ Ամենայն ինչ հիմնում է նա «սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն» իմաստուն խօսքերի վերայ. ինչպէս առաջին կրթութիւնը ընտանեկան է, քան հայրն ու մայրը բարձր է Աստուած և մօտագոյն իւրաքանչիւրի սրտին, քան որ և է ոք, որովհետև նորա հաւատքով կազդուրելով, ստանում է մարդս այնպիսի զօրութիւն, որ անվհատ է ամենայն բռնութիւնների դիմաց։

1808-ին Պրուսիայի Լուիզէ թագուհին գրեց. «ես կարդում եմ այժմ Պեստալոցցու «Լինհարդ և Գերտրուդ»։ Քանի հաճելի է ինձ Զուիցերայի այդ գիւղում։ Լինէի ես ինքնագլուխ, կը նստէի իմ կառքում և կը սլանայի Զուիցերիայ՝ Պեստալոցցու մօտ, այդ ազնիւ մարդուն արտասուալից աչքերով շնորհակալութեամբ ձեռքը կը սեղմէի։ Քանի բարեացակամ է նա մարդկութեան։ Այո, յանուն մարդկութեան շնորհակալ եմ ես նորանից»։ Պեստալոցցին պատկերացնելով այդ դրուածքում ժողովրդի իսկական կեանքն աննման յաջողութեամբ, իւր բոլոր ջանքը գործ է դնում նորա դրութիւնը բարւոքելու, մաքրելու, վերհացնելու... Նորա այդ գրուածքը, իբրև դասական, ընդունելի եղաւ ամենուրեք։ «Լինհարդ և Գերտրուդ», ասում է Դիստերվեգ, Պեստալոցցու միակ գիրքն է, որն ես գործնական ուսուցիչներին խորհրդաբերում եմ անպայման»։ Իւր միւս գրուածքում Ֆիխտէ՝ի գերակախուղութեան յարելով, ասում է՝ «իբրև բարոյական էութիւն զգում եմ ես մի զօրութիւն իմ մէջ, որը կայ, վասն զի ես կամ, և ես կամ, վասն զի նա կայ». «Քրիստոնէութիւնն է ամբողջովին բարոյականութիւն, ուստի և անձնիւր մարդու անհատականութեան գործ»։ Ահա այս հռչակաւոր սկզբունքներով բացորոշում է ուսուցման և կրթութեան գործը՝ հոգեբանական և անհատական օրէնքներին, բարոյական, հոգեկան և ֆիզիքական զարգաց-

ման մէջ ամենաբարձր տեղ տալով, որոնց վերայ արդէն տեղ տեղ խօսեցանք։ Ամենայն դէպքում նա լենում է Ս. Գրքի վերայ, ինչպէս և իւր կնոջ դիակի վերայ ձգելով մարդկայնութեան այդ կտակարանը, բացականչում է՝ «այս աղբիւրից ստեղծեցինք դու և ես արիութիւն, ամրութիւն և խաղաղութիւն»։

Պեստալոցցին ուսուցման քաջավար խթանը տալով, ձգտում էր բարելաւել տնային կրթութիւնը, բարձրացնել ժողովրդի ստորին խաւերն, ընդ նմին և ըստ մանկական ոգուն բնայատուկ լարմարութեան հայեցողական պարզ և հասարակ սկզբունքով մանկան ոյժերը վարժեցնել և առ հոգեկան աղատութիւն և ինքնագործունէութիւն առաջնորդել։ «Երբ ես ինձ հարցնում եմ, ասում է նա, ինչ եմ էապէս կատարել մարդկային ուսուցման մէջ, ես գտնում եմ՝ ես պինդ դրել եմ իբրև ամենավերին կիտակ (աքսիոմա) հայեցողութիւնը, իբրև բացարձակ հիմք ամենայն իմացութեանց խոստովանելով»։ «Մեր ներքին զգայութեան օրէնքները պէտք է մեր հոգեկան և բարոյական կեանքի օրէնքներին ստորակարգուին։ Առանց այդ ստորակարգութեան անհնար է, որ մեր բնութիւնքի զգացողութիւնը երբէք կարողանայ ճշդապէս ներգործել մեր զարգացման վերջին հետևանքների ճշմարիտ արտադրութեան կամ մարդկայնութեան արտադրութեան վերայ։ Մարդս մարդ է միայն իւր հոգևոր ներքին կեանքով, դրանով է նա անձնիշխան, աղատ և զոհ»։ Ամենայն թշուառութեան և մեղքի աղբիւրը, ըստ Պեստալոցցուն, տգիտութիւնն է, ուստի պէտք է թշուառներին աղատել տգիտութեան ճիրաններից և ահա կը փրկէք նրան թշուառութիւնից, մեղսագործութիւնից և այլն։ Պեստալոցցին սիրելով ի սրտէ իւր ժողովուրդը, պատանեկութիւնը, գործեց անձնուիրութեամբ լոգուտ նորա բարգաւաճման և հիմնաւորապէս խորամտութեամբ արդիւնաւորեց կատարելագործելով մինչև իւր ժամանակն արտայայտած մանկավարժական գաղափարներն, այնպէս որ նա իւր նախորդների մտքերի կազապարողը կարող է համարուել։ Նորա մտադրդիոն էր, որ լառաջ բերաւ Ֆրեօբելի մանկապարտէզը Թիւրինգենում և զգալի բարեփոխութիւն մտցրեց կրթութեան և ժողովրդի զարգացման դրութեան մէջ, ըստ որում պէտք է կեանքն ազնւանար բոլոր խաւերում, իւրաքանչիւր անձն պէտք է կրթուէր աստուածապաշտ, առաքինի և հայրենասէր լինելու։ Մանկապարտէզը մեծ ծառայութիւն է մատուցանում ուսուցման, վերջինիս հարկաւոր և մանկան մէջ եղած բոլոր ընդունակութիւնները առընչաբար զարգացնելով, վասն զի մանուկը իւրանմանների հետ վարելով լարմարութիւն է ունենում հոգեպէս լառաջանալու։

«Մի մեկին հոգեկան նայուածքով և իւր պարզութեամբ, ասում է Միշելէ, գտել է Ֆրեօբել այն, ինչ որ իմաստունները զուր որոնել են՝ կրթութեան գաղտնիքը։ Ֆրեօբելի վարդապետութիւնը է ժամանակի կրթութիւնը և իրաւ ճշմարիտ կրթութիւնը։ Կրթութիւն ըստ Ֆրեօբելի գաղափարին՝ ոչ արտաքին, ոչ նախորոշ և ոչ կամայական. նա ինքն իսկ մանուկից է դուրս բերուած.

մանուկն իրմով սկսում է պատմութիւն, մարդկային սեռի ստեղծաբերող գործունէութիւնը»։ Եւ իրաւ, որքան ընտանեկան կրթութիւնն է անհրաժեշտ դպրոցական գործի յառաջադիմութեան, նոյնքան կարևոր է մանկապարտէզը մանաւանդ առաջինի թերադէպ ժամանակ։ Այդ է պատճառը, որ այդ գաղափարի իրագործումը բոլոր հասուն մանկավարժների պահանջներից մէկն է եղել, ըստ որում և դորա իրականացումը մեծ զարկ տուեց Պեստալոցցու յեղաշրջած և բարեկարգած դպրոցական աշխարհին։

Մանկավարժութեան այս նոր հոսանքը յաջողուեց նոյն իսկ քաղաքական անպատեհ բայց զարթուցիչ հարուածների ներքոյ։ Մինչդեռ այս հանճարներն ազգի ցաւերին խելամուտ լինելով, մտաւոր յեղափոխութեան անվեհեր զինուորներ էին հանդիսանում, ուստի ընդհանրապէս ազգային գոյն չունենալով դեռ ևս անհաս էր ժողովրդին նպաստաւոր լինելու. պէտք էր նոր կերպարանք տալ դորան. այդ եղաւ Ֆրիդրիխ Վիլհելմ III-ի աշխատութեամբ կամ ազդեցութեան տակ, արդարադատութեան նախարար Մասսովի ջանքով, երբ ազգային կրթութեանը իւր արժանաւոր և վայելուչ տեղը տուին։ 1800-ին Գեօդիքը գրում էր՝ «մէկ իշխան, որ լաւագոյն ազգային կրթութեան ստեղծողն է, ապրում է ոչ միայն սերունդի համար, այլ և անպատճառ այդ սերունդի մէջ»։ Այդպիսիներից էր և փշեալ թագաւորը. սակայն որչափ գործը բարեպատեհ էր, այնու հանդերձ ձգտումների միութիւնը դեռ պակասում էր. իսկ ապա Նապոլէօնի սոսկալի ճակատը Ենայի մօտ, որտեղ ջարդ ու փշուր եղաւ գերմանական զօրութիւնը, փոխեց իրերի դրութիւնը և նկատելի եղաւ թշւառութեան մէջ, որ նեղ էր տիրող հանրոգին, դեռ խոպան էին մարդկանց սրտերը, պակասում էին հոգևոր առաքինութիւններն, որոնք հիմքեր են ճշմարիտ հայրենասիրութեան։ Այդ ժամանակ գերմանացիների թշնամին սկսաւ իւր պաշտպանութեան գործ ածել քաղաքացիներին, որոնք միութեան դրօշի տակ ինքնագիտակցութեան եկան և սկսան քաղաքակրթական միութիւններ հիմնել, իսկ վերջապէս ջանահնար եղաւ իւր ազգը կրօնական, բարոյական և ազգային ոգու զարթուցմամբ տնտեսական, քաղաքական և ընկերական բարձրութեան ձգտել։ Նա համոզուած էր, որ թէ ընդհանուր և թէ անհատական կեանքի բարելաւացումն այն ժամանակ միայն կարելի կը լինի, երբ իւրաքանչիւր ոք ըստ կարելոյն յարմարութիւն կ'ունենայ անարգել զարգացնելու իւր ընդունակութիւններն, իւր ոյժերն և կիրարկելու։ Գրուսիան պատերազմի խաղաղութիւնից յետոյ զգալագէս նեղել էր, սակայն Ֆր. Վիլհելմ Գ. տակաւին չը վհատեց. նա ասում էր, որ կորցնելով ինչ ինչ արտաքուստ, պետութեան զօրութիւնն ևս ընկճուեց, «սակայն մենք պիտի և հարկ է հոգանք ներքին զօրութիւն և ներքին փայլ ձեռք բերելու, վասն որոյ և իմ լուրջ կամքն է՝ որ մեծ ուշք նուիրի ուսուցման։ Արդա՜ր, որ ինչ արտաքին է՝ շարժական է, նիւթական է, կորուստի և յափշտակութեան ենթակայ։ Ներքին դանձ պէտք է զարգացնել, որ

մշտական սեպհականութիւն լինի»։ Այս գաղափարը, որ հապա ևս արծարծուեց Ֆիխտէի մտաւորականութեամբ, ծնաւ այն ժամանակ, երբ գերմանացիք իրանց նիւթաւոր հարստութեան անցաւորութիւնը տեսան Նապոլէոնի հետ ընդհարուելով։ Շատ ժամանակ չ'անցաւ և ահա Պեստալոցցու կերպարուած հիմունքները զարգացան զիանական մանկավարժութեան օրօրքում, որի զօրավիդներն էին Կանտ ու Հերբարտ, Ֆիխտէ և Հեգել և այլք։ ընդ նմին և Պրուսիայում սկսան, ըստ Ֆիխտէի, ամենայն միջոցներ գործ դնել բարձրա-ազգային կրթութիւնը դիւրամարս կացնելու ամենամասաղ մտքերին։ Խոհեմ թագաւորն ևս վերակոչեց և բարձրացրեց ժողովրդական ոգին, ամենայն ինչ ազգայնացնելով, միայն ազգային ճանաչելով և աչքի առաջ ունենալով, որով միացաւ ազգն ազգային պետութեան հետ։ Այսպիսով Պրուսիան շատ առաջ գնաց. հոգի, կեանք, գործ—ամբում էին աղատութեան մէջ. կրթութիւնը իւր ընդարձակութեամբ լիք սերմանիք էր, որ առատապէս ցանւում էր խաղաղութեան մէջ։ Կրթութիւնը, իրաւ է, մեծ կարևորութիւն էր ստացել, սակայն չէր յաջողւում և շատ հասկանալի պատճառով. մարդ էր հարկաւոր, ճշմարիտ ուսուցողներ էին անհրաժեշտ, որոնք չը կային. բայց մարդիկ ունենալու համար դարձեալ մարդիկ էին հարկաւոր. լաւ ուսուցիչներից—լաւ դպրոցներ՝ այս էր 1790—1866 Դիստերվեգի աքսիոմը. նա ասում էր. «որտեղ դպրոցի էութիւնը ընկած է, ուսուցիչներն են այդ անկման պատճառը. որտեղ բարձրացած է, ուսուցիչներն են որ բարձրացրել են։ Ալ ևս ուրիշ ելք չը կայ։ Ըստ այդմ ամեն ուսուցչանցի խնդիրն է՝ ըստ կարելւոյն հոգու բարձր և հիմնաւոր զարգացումն, վասն զի միայն արթուն, խոհուն, ինքնակամ, ըստ որում փորձող, հետաքննող, հասած մարդիկն են ուսուցչութեան արժանի»։ Նորա ուսուցչանոցը Մորսում պէտք է օրինակելի լինէր և եղաւ ամբողջ երկրի համար. այնտեղ պէտք է վարժապետացուները. տեսականի իրագործմամբ փորձնական լինէին և ապա զարգացնէին իրանց գիտութիւնը և փորձը օրըստօրէ. գիտենալը անհրաժեշտ է, սակայն կարենալը պակաս է գիտենալուն։ Որչափ օրինակելի էր վարժոցը, նոյնչափ և նա ինքն, որի դասատուութեան միջոցին աշակերտները իրանց բոլոր էութեամբ նուիրւում էին նրան։ Դպրոցի զարգացման չափն է՝ կարդալ և խօսելն, որոնք Դիստերվեգի մօտ վերին կատարելութեան էին հասած։ Նա նուիրած էր այս սուրբ գործին մի չարք հոգաջան անձերի օգնութեամբ, ինչպէս երևում է այս խօսքերից՝«Rochone genuit Wilberg Wilberg genuit Diesterweg et fratres ejus»։ Երկար ժամանակ չանցաւ և Դիստերվեգ ժողովրդի մշակութեան (կուլտուր), որ ազգի աննման ամրութիւնն է, մեծ ծառաչութիւն մատուցց, ըստ որում այս դպրոցի աշակերտները տարածեցին աջ ու ձախ մի գաղափարով ոգևորուած և մի ուղղութեամբ, պարտականութիւնների ճշմարիտ գիտակցութեամբ, ինչպէս երևում է Դինտերի խօսքերից, որ նա գրում էր նախարարին՝ «անձնիւր պրուսական երեխայ մի գոյակ է իմ աչքիս առջև, որ կարող է գանգատուել Աստուծուն եթէ ևս նորան ըստ իմ կարողութեան չը հասցնեմ մարդկային և քաղաքական զարգացման»։ Պարտաճանաչութեան այս արտայայտութիւնն, որ ոչ թէ մէկի, այլ բազմաց ձայնն է, պարզ ապացոյց է ե նշան այն ժամանակի չառաջադիմութիւնը հասկանալու համար։

(Եր չարունակի)